

Շրջիկ գրադարանի բիբլիոթուսի այցը

Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջան

Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցները սույն թվականի հուլիսի 4-ին շրջիկ գրադարանով այցելեցին Լոռու մարզի Սպիտակի քաղաքային, Թումանյանի տարածաշրջանի մշակույթի կենտրոն, որտեղ հանդիպեցին գրադարանի աշխատակիցների ինչպես նաև Շնող, Կարճաճկուտ համայնքների գրադարանավարների հետ: Անցկացվեց խորհրդակցություն գրադարանային խնդիրների շուրջ: Քննարկվեց համայնքային գրադարանների վիճակը, համալրման և հաշվառման հետ կապված հարցեր: Թումանյանի տարածաշրջանի Հ. Թումանյանի անվան, Հր. Մաթևոսյանի անվան և Ակների քաղաքային գրադարաններին, նաև Շնողի, Կարճաճկուտի, Մղաքի, Ճոճկանի, Օձունի, Դսեղի համայնքային գրադարաններին նվիրաբերվեց 424 միավոր գրականություն: Սպիտակի քաղաքային գրադարանին մերժված գրականության ցանկերից տրամադրվեց 80 միավոր գրականություն, և 60 միավոր գրականություն՝ նվիրատվություն: Գրադարանի տնօրեն Քնարիկ Գրիգորյանը մանրամասն ծանոթացրեց գրադարանի աշխատանքներին, ներկայացրեց կատարված միջոցառումները և հետագա ծրագրերը: